ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Մ.Ադամյան-1 հասցեում, ստորև ներկայացնում է ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2014թ-ի դեկտեմբերի 16-ին կնքված ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 ծածկագրով գնման պայմանագրում 2015թ-ի հունվարի 30-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ 2014 թվականին հատկացվելիք ֆինանսական միջոցների և պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ բացասական տարբերությունը կվճարվի այդ նպատակի համար համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում՝ լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման նպատակով 30.01.2015թ. կնքվել է համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման համար նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 011 800 626:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ ֆինանսների նախարարություն**

Համաձայնագիր-1
16.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «30» հունվարի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Ա.Արզումանյանի մի կողմից, և «Ֆիլիշին» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կապալառու», ի դեմս ընկերության տնօրեն Ս.Հակոբյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 16.12.14թ. կնքված N ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2 գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.4-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1.Պայմանագրի 8.2 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.2. Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրով նախատեսված աշխատանքի արդյունքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2015 թվականի դեկտեմբերի 25-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պատվիրատու	**Կապալառու**
ՀՀ ֆինանսների նախարարություն	«Ֆիլիշին» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Ադամյան-1	ՀՀ Տավուշի մարզ, գ.Հաղարծին, 1-ին փողոց 10-րդ փակուղի.15
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900013202016, 900013574018	Հ/Հ 2472300335960010
ՀՎՀՀ 02629081	ՀՎՀՀ 07905342
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝ **Ա.Արզումանյան**	«Ֆիլիշին» ՍՊԸ-ի տնօրեն **Ս.Հակոբյան**
(ստորագրություն) Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«16» դեկտեմբերի 2014թ. կնքված
N ՀՀ-ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-14/2
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում											
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը Տարի**
ՀՀ ֆինանսների նախարարության ք.Երևան, Անդրանիկի 37/1 հասցեում գտնվող վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքներ	5113	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	44 177 379	**44 177 379**

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

Պատվիրատու
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ.Ադամյան-1
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02629081
ՀՀ ՖՆ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Արզումանյան

(ստորագրություն)
Կ.Տ

Կապալառու
«Ֆիլիշին» ՍՊԸ
ՀՀ Տավուշի մարզ, գ.Հաղարծին, 1-ին փողոց 10-րդ փակուղի.15
«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2472300335960010
ՀՎՀՀ 07905342
«Ֆիլիշին» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ս.Հակոբյան

(ստորագրություն)
Կ.Տ